



Մ. ՅԱԿՈԲԻ

Ն Ե Ր Ս Է Ն

* Կիր. 1 Յունիս.— Տօն Երևման Ս. Խաչին (351): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեդանին վրայ, որուն վերին կը նշմարուէր վառ կանթեղներով զարդարուն Ս. Խաչին նշանը: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աղան Վրդ. Պալիօզեան:

* Եր. 7 Յունիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

* Կիր. 8 Յունիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութին, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Դշ. 11 Յունիս.— Վաղուան Համբարձման տօնին առիթով, կէսօրէ ետք, Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով քարձրացան Զիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին վրայ կառուցուած մեր վրանամատուոյն մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնը և նախատօնակը:

— Իրիկեանդէմին, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Եկեացէ»ի և Հսկման կարգեր, և ապա՝ գիշերային և առաւօտեան ժամերգութիւններ: Հանդիսապետըն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վարդապետ: Արարողութիւնները աւարտեցան գիշերուան ժամը 10.30-ին:

* Եշ. 12 Յունիս.— ՀԱՄԲԱՐԶՈՒՄՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ: Առաւօտուն, Գերշ. Տ. Ծառէ Արքեպս. Անէմեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով քարձրացան Զիթենեաց լեռ, ուր «Հրաշափառ»ի հանդիսաւոր մուտքէն ետք Համբարձման սրբատեղիին վրայ կառուցուած մեր վրանամատուոյն մէջ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց և Համբարձման խորհուրդին շուրջ քարոզեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը: Կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք»՝ Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձին առթիւ: Ս. Պատարագէն ետք Գերշ. Սրբազանը նախագահեց սրբավայրին առջև կատարուած «Անդաստան»ին:

— Կէսօրէ ետք ևս Մայր Տաճարին մէջ «Անդաստան» կատարուեցաւ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողարեան:

* Եր. 14 Յունիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայրավանքի Ս. Համբարձոմ վերանամատուոյն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

— Բ. Ծաղկազարդի նախատօնակը պաշտուէցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեան:

* Կիր. 15 Յունիս.— Երկրորդ Ծաղկազարդ: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուէցաւ և Ս. Պատարագը մատուցուէցաւ Ս. Հրեշտակապետ: Ժամաւարն էր Հոգշ. Տ. Գեորգ Վրդ. Նազարեան:

* Ուր. 20 Յունիս.— Նկատելով որ ազգիս Վեհափառ Հայրապետը Ս. Բաղդասար պիտի ժամանէ Հոգեգալստեան տօնին, այսօր, Կ. ա. ժամը 11-ին, Հոգշ. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիէանի գլխաւորութեամբ տեղի ունեցաւ Սիոնի վերնատունի տարեկան իրաւունքի մեր արարողութիւնը:

* Եր. 21 Յունիս.— Ս. Պատարագը մատուցուէցաւ Մայրավանքի Ս. Առաքելոց վերնամատուին մէջ: Ժամաւարն էր Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան:

— Հոգեգալստեան հանդիսատր նախատօնակը պաշտուէցաւ Ս. Յակոբ, նախագահութեամբ Թորքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Ընդրիք Արքեպս. Գալուստեանի:

— Գիշերասկզբին, Ամեն. Տ. Ընդրիք Պատրիարքը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցէ»ի և Հսկման կարգերուն:

* Կիր. 22 Յունիս.— ՀՈԳԵԳԱՆՈՒՍ: (Բարեկենդան Եղիական պահոց): Օրուան հանդիսատր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Ամեն. Տ. Ընդրիք Պատրիարքը և Յովհաննու Ոսկերեւանի Հոգեգալստեան ներքոյի ընթերցումէն ետք քարոզեց օրուան տօնին խորհուրդին շուրջ: Յայտնեց թէ Ս. Հոգին ստացած են ո՛չ միայն առաքեալները՝ Սիոնի վերնատունին մէջ, այլև իւրաքանչիւր քրիստոնէայ, իր մկրտութեան պահէն սկսեալ: Անիկա հունտ մըն է, սերմ մը, ինկած մեր հոգեդաշտին մէջ:

* Եր. 28 Յունիս.— Է. օր Հոգեգալստեան: Այսօրուան Ս. Պատարագը, որ սովորաբար կը մատուցուէր Մայրավանքի տանիքին արևելակողմը գտնուող Ս. Հոգիի մատուին մէջ, մատուցուէցաւ Մայր Տաճարին մէջ, որ Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեան կատարեց սարկաւազական ձեռնադրութիւնը Ս. Աթոռոյս Ընծայարանի ուսանողներէն Ուրարակիր Տիրացուներ Սերոբ Գալէմտէրեանի, Յակոբ Տորսումեանի և Ամերիկահայ ուսանող Պարոյր Մելքոնեանի: Ձեռնադրիչ Սրբազանը խօսեցաւ իրատական քարոզ մը, ընծայեալներուն յորդորելով Աստուծոյ և ազգին ծառայել իրենց բովանդակ կարողութեամբ: Ապա Ս. Պատարագ մատուցուէցաւ Ս. Գլխադրի մատուին մէջ: Ժամաւարն էր Ամերիկայէն ժամանած Ս. Ուխտիս Միաբան Հոգշ. Տ. Փառէն Վրդ. Աւետիքեան:

* Կիր. 29 Յունիս.— Յիշատակ Եղիայի Մարգարէին: Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետը մատուց հանդիսատր Ս. Պատարագ Բրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, քարոզեց և նախագահեց մեծահանդէս թափօրին:

* Բշ. 30 Յունիս.— Ս. Կուսանացն Հոփսիսմեանց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուէցաւ Ս. Հրեշտակապետ, իսկ Ս. Պատարագը մատուցուէցաւ եկեղեցիի աւանդատունին՝ Ս. Հոփսիսմէի մատուին մէջ: Ժամաւարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուշլարեան:

* Ուր. 4 Յուլիս.— Նախատօնակին Ս. Յակոբի մէջ նախագահեց Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեան:

* Եր. 5 Յուլիս.— Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաորչին: (Յիշատակ ելանելոյն ի Վիրապէն): Ս. Պատարագը մատուցուէցաւ Մայր Տաճարի աւանդատունին՝ Ս. Լուսաորչի սեղանին վրայ: Ժամաւարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

— Նախատօնակին Ս. Յակոբի մէջ նախագահեց Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեան: Արարողութեան աւարտին ծնրադիր երգունցաւ «Տէր ողորմեա»:

* Կիր. 6 Յուլիս.— Տօն Կաթողիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Հոգշ. Տ. Գեորգ Վրդ. Նազարեան: «Հայր մեր»էն առաջ, Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ, կատարունցաւ «Հայրապետական մաղթանք վասն Ս. Էջմիածնի»:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ «Անդաստան» կատարունցաւ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողարեան:

* Ծր. 12 Յուլիս.— Ս. Մեծին Ներսիսի և Խաղայ Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցունցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 13 Յուլիս.— Բարեկենդան Ս. Լուսաւորչի պահոց: Ս. Պատարագը մատուցունցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատուոյն մէջ (առաջին անգամ ըլլալով նորոգութենէն և օծումէն ետք): Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառուլարեան:

* Որ. 18 Յուլիս.— Նախատօնակին Ս. Յակոբի մէջ նախագահեց Հոգշ. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիէան:

* Ծր. 19 Յուլիս.— Գիտ նշխարաց Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Ս. Պատարագը մատուցունցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատուոյն մէջ, ուր թաղուած է, ըստ աւանդութեան, մասունքը Ս. Լուսաւորիչի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 20 Յուլիս.— Ս. Պատարագը մատուցունցաւ Ս. Յարութին, մեր վերնատունի մատուոյն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Դշ. 23 Յուլիս.— Թարգմանչաց հանդիսաւոր նախատօնակին Ս. Յակոբի մէջ նախագահեց Հոգշ. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիէան:

* Եշ. 24 Յուլիս.— Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց՝ Սահակայ և Մեսրոպայ (Տօն ազգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց, ըստ սովորութեան, Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանի Տեսուչը՝ Հոգշ. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիէան:

* Ծր. 26 Յուլիս.— Ս. Տրդատայ թագաւորին մերոյ և Աշխէն տիկնոջն և Խոսրովիդիստոյն: Ս. Պատարագը մատուցունցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեան:

— Նախատօնակին Ս. Յակոբի մէջ նախագահեց Հոգշ. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիէան:

* Կիր. 27 Յուլիս.— Գիտ Տփոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցունցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնի Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գեղեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառուլարեան: Երթողարձի թափօրներուն նախագահեց Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլոսեան:

ՄԱՆՏՈՆԵՐ



* Բշ. 2 Յունիս.— Երեկոյեան, Իտալիոյ ազգային տօնին առիթով, իտալական ընդհ. հիւպատոսին կողմէ հիւպատոսարանին մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ասագ Թարգման Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան և Տիար Գ. Հինդեան:

* Գշ. 10 Յունիս.— Ամերիկեան ընդհ. հիւպատոս Պրն. Արթիւր Տէյ, իր մեկնումին առիթով հրաժեշտի այցելութեան եկաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

— Նոյն օր, Պատրիարք Ս. Հօր այցելեց Միացեալ Ազգերու Կազմակերպութեան մօտ Իսրայէլի նոր նշանակուած ներկայացուցիչը՝ Պրն. Հայիմ Հէրսօլ:

* Դշ. 18 Յունիս.— Երեկոյեան, Անգլիոյ Թագուհիի ծննդեան 49րդ տարեդարձին առթիւ, քրիտանական ընդհ. հիւպատոսին կողմէ հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան և Տիար Կ. Հինդեան:

* Բշ. 14 Յուլիս.— Երեկոյեան, Ֆրանսայի ազգային տօնին առթիւ, ֆրանսական ընդհանուր հիւպատոսին կողմէ հիւպատոսարանի պարտէզին մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբրիէան, Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան, Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան և Տիար Կ. Հինդեան:

* Բշ. 21 Յուլիս.— Երեկոյեան, Պելճիքայի ազգային տօնին առթիւ, պելճիքական ընդհանուր հիւպատոսին կողմէ հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբրիէան, Հոգշ. Տ. Վահան Վարդապետ և Տիար Կ. Հինդեան:

